Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՍԱՐԳԻՍ ՀԱՅՈՑՅԱՆԻ ԻՏԱԼԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անունը, ազգանունը

Սարգիս Հայոցյան

2. Զբաղեցրած պաշտոնը

ՀՀ գիտության կոմիտեի նախագահ

3. Գործուղման վայրը և ժամկետները

Իտալիայի Հանրապետություն, ք. Իսպրա, 14-17 հունիսի, 2022 թվական

4. Հրավիրող կողմը

Եվրոպական հանձնաժողովի Միացյալ հետազոտական կենտրոն (ՄՀԿ)

5. Գործուղման նպատակը (աշխատանքային որ խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)

Մասնակցություն Եվրոպական հանձնաժողովի Միացյալ հետազոտական կենտրոնի կառավարիչների խորհրդի 127-րդ նիստին:

Մասնակցությունը վերոնշյալ միջոցառմանը նպաստում է եվրոպական հետազոտական տարածքին ՀՀ գիտական համայնքի ինտեգրմանն ուղղված աշխատանքների բնականոն կազմակերպմանը:

6. Քննարկված թեմաները

1. ՄՀԿ գլխավոր տնօրենության զեկույցը ՄՀԿ գործունեության վերաբերյալ,
2. ՄՀԿ միջուկային գործունեությանն առնչվող ռազմավարությունը և աշխատանքային խմբի զեկույցը,
3. ՄՀԿ 2023-2024 թթ. աշխատանքային ծրագիրը,
4. ՄՀԿ ենթակառուցվածքների հետ ՀՀ գիտական համակարգի համագործակցության հարցերը:

7. *Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը*

Հունիսի 15-ին Ս. Հայոցյանը մասնակցել է ՄՀԿ կողմից կազմակերպված Գիտության գագաթնաժողովին և ՄՀԿ գերազանցության մրցանակաբաշխությանը, հունիսի 16-ին մասնակցել է ՄՀԿ կառավարիչների խորհրդի նիստին, իսկ հունիսի 17-ին այցելել է ՄՀԿ Տրանսպորտային միջոցների շուկայի վերահսկման, Ճգնաժամերի կառավարման, Նանոկենսատեխնոլոգիայի և Օդի որակի վերահսկողության լաբորատորիաներ:

Հունիսի 15-ին Գիության գագաթնաժողովին մասնակցել է «Գիտությունը քաղաքականության համար, որպես հասարակական մարտահրավերների հաղթահարման գործիք» և «ՄՀԿ-ի գիտական համագործակցությունը Հորիզոն Եվրոպային ասոցացված երկրների հետ» քննարկումներին, ապա «Համապատասխան ապագային» պանելային քննարկմանը:

Հունիսի 16-ի կառավարիչների խորհրդի նիստին ներկայացվեց Գլխավոր տնօրեն Ստիվեն Քուեսթի զեկույցը, ապա ՄՀԿ կառուցվածքային փոփոխության ծրագիրը, որին հաջորդեցին ռազմավարական մի շարք փաստաթղթերի քննարկումներ:

Ներկայացվեց նաև ՄՀԿ գիտական նվաճումների վերաբերյալ զեկույց, որի ժամանակ Հայոցյանի կողմից առաջարկվեց, հաշվի առնելով ՄՀԿ հատուկ նշանակությունը՝ գիտական արդյունավետության ցուցանիշների մեջ, բացի դասական գիտաչափական ցուցանիշներից, ներառել նաև այն քաղաքական փաստաթղթերի ցանկը, որոնց ընդունման հիմք են հանդիսացել ՄՀԿ- ում արված հետազոտությունները:

Հաջորդիվ տեղի ունեցան ՄՀԿ կառավարիչների խորհրդի նախագահի ընտրությունները, նախագահի պաշտոնում վերընտրվեց Հաղվե Բերնարը:

Հունիսի 17-ին տեղի ունեցան այցելություններ ՄՀԿ 43 կենտրոններից 4-ը, որոնք հանդիսանում են գերժամանակակից և հագեցած հետազոտական կենտրոններ, և որոնցում կատարվում են կիրառական հետազոտություններ՝ ուղղված եվրոհանձնաժողովի կողմից ընդունվելիք փաստաթղթերի համար գիտական հենքի ստեղծմանը: Սրան զուգահեռ նույն կենտրոններում իրականացվում են նաև գիտական բարձր արժեք ունեցող հետազոտություններ, որոնց հավաստիքն է տպագրությունների բարձր որակն ու քանակը:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը

Մասնակիցները շարունակելու են Կառավարիչների խորհրդի կազմում հանդիպումներն ու աշխատանքային քննարկումները, պայմանավորվածություն ձեռք բերվեց նոյեմբեր ամսին ակնկալվող հաջորդ հանդիպումը ևս, ըստ հնարավորության, իրականացնել առկա ձևաչափով:

9.Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

ՄՀԿ ղեկավարության և առանձին հիմնարկների ղեկավարների հետ պայմանավորվածություն է ձեռք բերվել ՄՀԿ բաց ենթակառուցվածքների և ՀՀ գիտական կառույցների միջև համագործակցության, ինչպես նաև ՀՀ գիտնականների վերապատրաստման վերաբերյալ՝ ՄՀԿ ընձեռած հնարավորություններից առավել շատ օգտվելու ուղղությամբ:

Հանդիպումների ժամանակ աշխատանքային քննարկումներ են տեղի ունեցել Պորտուգալիայի Գիտության և տեխնոլոգիաների հիմնադրամի նախագահ Հելենա Պերեիրայի հետ, քննարկվել է Հայ-պորտուգալական են գիտական համագործակցության հնարավորությունները, Նորվեգիայի հետազոտական խորհրդի կլիմայի և շրջակա միջավայրի գծով տնօրեն Անիկե Բրոնտ-Կյելսենի հետ պայմանավորվածություն է ձեռք բերվել Հայ-նորվեգական համագործակցության հնարավորությունները քննարկելու մասին:

10. Ստորագրությունը, ամսաթիվը

Recoverable Signature

X

ՍԱՐԳԻՍ ՀԱՅՈՑՅԱՆ

Signed by: HAYOTSYAN SARGIS 3611840777

Սարգիս Հայոցյան

20.06.2022թ.